

Ուսումնավարժանքներ փրկարարի օրվա կապակցությամբ

Համաձայն <<ՀՀ Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2014թ. հիմնական միջոցառումների պլանի>> 7.3.2 կետերի պահանջների, սեպտեմբերի 4-ին՝ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակցի օրվա կապակցությամբ, Աշտարակ թիվ 3 հիմնական, Օհանավանի, Կարբիի, Փարպիի և Օսկևազի միջնակարգ դպրոցներում անցկացվեց օրիելտային վարժանքներ << Փրկարարական աշխատանքների իրականացում փլատակներում>> և << Հրդեհի ժամանակ տարահանման միջոցառումների կազմակերպում>> թեմաներով:

Վարժանքների ղեկավարները դպրոցների տնօրեններն էին, որոնց մասնակցություն ունեցան նաև Արագածոտնի ՄՓՎ աշխատակիցները՝ մեթոդական ցուցումներ տալով վարժանքների անցկացման ընթացքում:

Համաձայն <<ՀՀ Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2014թ. հիմնական միջոցառումների պլանի>> 7.6.1 կետերի պահանջների, Աշտարակի թիվ 1, Լուսազյուղի, Ոսկերատի, Աշտարակի թիվ 3 հիմնական, Արագածավանի թիվ 1, Վարդենիսի, Արայի, Ապարանի թիվ 1, Ոսկևազի և Ագարակավանի միջնակարգ դպրոցների ղեկավար կազմի կողմից նախատեսված է անցկացնել դասախոսություններ ուսուցչական և աշակերտական կազմի հետ <<ՀՀ օրենքը << Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին>>> թեմայով: